ԲԱԺԻՆ 2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
РАЗДЕЛ 2: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ
SECTION 2: TEACHING METHODICS

ԳՈՒՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արզումանյան Արմենուհի
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: «ԳՈՒՍ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները» վերտառությամբ հոդվածում փորձել ենք ցույց տալ մեթոդի կիրառման տարբեր մոտեցումները՝ կախված ուսուցանվող նյութի բնույթից և աշակերտների տարիքային խմբից: Մեթոդի կիրառման ինքնատիպ յուրահատկությունները տեսանելի ենք դարձրել հայ գրականության դպրոցական ծրագրում ներառված գրական երկերի վերլուծության հիման վրա:

Բանալի բառեր և բառակապակցություններ: Տեսողական հիշողություն, համեմատական-վերլուծական մտածողություն, գաղափարական խնդիրներ, պատկերակերտման միջոցներ:

Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել ԳՈՒՍ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորություն, անցած նյութի համակարգում և ամփոփում, այդ ճանապարհի բացթողումների հայտնաբերում և գիտելիքների վերհիշեցում, տեսողական հիշողությամբ ուսուցանվող թեմայի ամրապնդում:

Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդրին նվիրված մի շարք գիտական հետազոտություններ՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ», ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Ս. Խաչատրյան, «Է. Ֆ. Էբերտ» հիմնադրամ, Հայաստան, 2020, Valmont W., Technology for literacy teaching and learning. New York. Houghton Mifflin Company, 2006, Allington R. And Cunningham P., Classrooms that work. Boston, Allyn and Bacon, 2004 և այլն:

Վերոնշյալ հեղինակները փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ մեթոդով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով և հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

Հետազոտության նորույթն է ԳՈՒՍ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման տարբեր մոտեցումների դիտարկումը: Առաջին անգամ քննարանվել են ուսուցանվող նյութով պայմանավորված՝ մեթոդի կիրառման տարբեր մոտեցումներ:

ԳՈՒՍ-ը (ԳԻՏԵՄ-ՈՒԶՈՒՄ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ-ՍՈՎՈՐԵՑԻ) երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է, որը ուսուցման հետաքրքիր և արդյունավետ միջոց է [4]: ԳՈՒՍ մեթոդը կարելի է կիրառել մի քանի մոտեցմամբ:

Մոտեցում 1-ին

ԳՈՒՍ մեթոդը կարելի է կիրառել նոր նյութի մատուցման փուլում: Այս մոտեցումը պետք է կիրառել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց բացատրությունը պահանջում է նախորդ նյութի վերհիշեցում, անցած թեմայի սեղմ ամփոփում, կարևոր երևույթների նորից բացատրություն, որը կնպաստի նոր նյութի ավելի խորքային ընկալմանը: Այսինքն՝ ԳՈՒՍ աղյուսակի առաջին սյունակում գրվում են նախորդ նյութի ամփոփման կարևորագույն դրույթները, քննարկվելիք իրողությունների բնութագրումները: Հետո երկրորդ հատվածում նշվում են այն ելակետային հարցադրումները, որոնք ամբողջացնում են նոր թեմայի գեղարվեստական արժեքը, գաղափարական հարցադրումները, կերպարային համակարգը, գրողի պատկերակերտման արվեստը: Աղյուսակի երրորդ հատվածում գրվում են վերոնշյալ հարցերի՝ ուսուցչի կողմից տրված պատասխանները, օրինակ՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ուսուցման մատուցման նախնական փուլում ուսուցիչը ԳՈՒՍ աղյուսակի առաջին հատվածում պետք է ամբողջական դրույթներով ներկայացնի պատմական այդ ժամանակաշրջանը, աշխարհաբար և գրաբար լեզուների գրապայքարը, կլասիցիստական գրական ուղղության սկզբունքները, հետո աղյուսակի երկրորդ հատվածում առանձնացնի այն ելակետային հարցադրումները, որոնք ընդգրկված են այդ օրվա մատուցելիք նյութի սահմաններում: Ուսուցիչը պետք է աշակերտների օգնությամբ նրանց վերհիշեցնի գրական ուղ-

ղությունները, հատկապես կլասիցիստական և ռոմանտիկական ուղղությունները, որպեսզի աշակերտները կարողանան հասկանալ գրապայքարի էությունը: Ամբողջացնելով անցած նյութը՝ պետք է նշել, որ 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի հայ գրականության գլխավոր ուղղությունը կլասիցիզմն էր, որը, գեղարվեստական նոր կյանք տալով պատմական անցյալի պատմամշակութային էջերին, վերածնում է նաև դասական լեզուն՝ գրաբարը, որը մոտ երկու դար իշխող է դառնում հայ գրական կյանքում: Սակայն գրաբարը հասկանալի չէր հասարակ ժողովրդին, որովհետև այն տարբեր էր ժողովրդի խոսակցական լեզվից՝ աշխարհաբարից: Եվ 19-րդ դարի 30-40-ական թվականներին լայն հասարակական հնչեղություն է ստանում լեզվի աշխարհականացման հարցը: Ի հակադրություն կլասիցիզմի՝ սկսվում է ձևավորվել մի ուղղություն՝ ռոմանտիզմը, որն առաջադրում է գրականության լեզվի, ոճի, բովանդակության աշխարհականացման խնդիրը՝ իր հայացքն ուղղելով դեպի ժամանակակից կյանքը: Գրական կյանքում նոր ճանապարհ բացող այս ուղղության հայտնի ներկայացուցիչներն էին Հարություն Ալամդարյանը, Մեսրոպ Թաղիադյանը և հատկապես Խաչատուր Աբովյանը:

Ուսուցիչը, այսպես ամփոփելով նախորդ նյութը, ընդհանրացնելով գրական ուղղությունների նկարագիրը, ԳՈՒՍ աղյուսակի առաջին հատվածում նշում է այդ ամենը ամբողջացնող դրույթները: Հետո աղյուսակի երկրորդ հատվածում գրում է այդ դասաժամի համար նախատեսված հարցադրումները: Առաջին դասի համար ուսուցիչը պետք է առանձնացնի վեպի «Հառաջաբան»-ում արծարծված խնդիրները՝ լեզվի, բովանդակության, հերոսի հարցերը [1]: Սյունակի երկրորդ հատվածում այդ հարցերը նշելուց հետո ուսուցիչը պետք է տա դրանց պատասխանները՝ երրորդ սյունակում ամբողջացնելով վերոնշյալ հարցերի էությունը:

Մոտեցում 2-րդ

ԳՈՒՍ մեթոդը կարելի է կիրառել նաև ուսուցանվող նյութի ամփոփման փուլում: Այն կարելի է կիրառել որևէ հեղինակի ամբողջ ստեղծագործական ճանապարհը ուսումնասիրելուց հետո, օրինակ՝ Մ. Նալբանդյանի կյանքն ու գրական ստեղծագործությունները ուսուցանելուց հետո՝ նյութի ամփոփման փուլում, կարելի է կիրառել վերոնշյալ մոտեցումը: ԳՈՒՍ աղյուսակի առաջին սյունակում աշակերտները կնշեն իրենց իմացածը Նալբանդյանի գեղարվեստական արձակի, հրապարակախոսության, բանաստեղծությունների թեմատիկ տրոհումների, նալբանդյանական կենսափիլիսոփայության և ազատաբաղձության ինքնատիպ խոսքի դրսևորումների, հեղինակի պատկերակերտ-

ման առանձնահատկությունների մասին։ Բոլոր աշակերտներին ներգրավելով անցած նյութի ամփոփման գործընթացին՝ ուսուցիչը կընդհանրացնի նրանց պատասխանները, և դրանք կնշվեն ԳՈՒՍ աղյուսակի առաջին սյունակում։ Այնուհետև աշակերտները կբարձրաձայնեն իրենց համար ինչ-որ տեղ անհասկանալի մնացած հարցադրումները, որոնք կնշվեն երկրորդ սյունակում։ Գուցե նրանց հետաքրքրեն նաև Նալբանդյանի այն ստեղծագործությունները, որոնք ուսումնական ծրագրում ներառված չեն։ Այդ դեպքում ուսուցիչը կարող է խոսել Նալբանդյանի խոհափիլիսոփայական բանաստեղծությունների մասին՝ «Լուսին», «Կյանք», «Մտածություն», «Վայր ընկնող աստղեր»՝ բացատրելով Նալբանդյանի կենսափիլիսոփայության ինքնատիպ շերտերը։ Ուսուցիչը կարող է վերլուծել հատկապես «Վայր ընկնող աստղեր» բանաստեղծությունը, որը դաստիարակչական մեծ նշանակություն ունի։ Նալբանդյանը հոր և դստեր զրույցի միջոցով, որը ընթանում է երկնքից աստղեր ընկնելու հրաշք պահին զուգահեռ, շեշտադրում է գործի անմահության գաղափարը, բարի ու գեղեցիկ գործեր կատարելով՝ մարդկային հիշողության մեջ հավերժանալու փիլիսոփայությունը [3]։ Գուցե աշակերտներին հետաքրքրի նաև այն հարցը, թե Նալբանդյանի կերպարը ինչ մարմնավորում է ստացել հայ գրականության մեջ։ Ուսուցիչը կարող է նշել, որ Նալբանդյանի կերպարին անդրադարձել են շատ նկարիչներ, գրողներ։ Առաջինը նրա կերպարի գրական մշակման փորձ կատարել է Պ. Դուրյանը՝ «Տարագիր ի Սիպերիա» ողբերգության մեջ պատկերելով մեծ հայորդու ողբերգական կյանքի ոդիսականը։ Ուսուցիչը կարող է նշել նաև Ե. Չարենցի «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» չափածո նովելը, որտեղ ներկայացվում է Նալբանդյանի տեսիլ կերպարը Պետրոպավլովյան ամրոցում, ուր անցել են հեղինակի անազատության օրերը։ Գուցե աշակերտներին հետաքրքրի՝ Նալբանդյանը թարգմանություններ կատարել է, թե ոչ։ Ուսուցիչը կարող է նրանց ներկայացնել Նալբանդյանի՝ Պուշկինի, Լերմոնտովի բանաստեղծությունների թարգմանությունները՝ բացատրելով հեղինակի թարգմանական արվեստի առանձնահատկությունները։

Մոտեցում 3-րդ

ԳՈՒՍ մեթոդը կարելի է կիրառել գրականության պատմության որևէ շրջափուլի, որևէ ժամանակահատվածի, որևէ գրական շարժման, որևէ բաժնի ուսումնասիրության ամփոփման փուլում։ Օրինակ՝ արևմտահայ բանաստեղծների գրական ստեղծագործությունները ուսումնասիրելուց հետո՝ ամփոփման փուլում, կարելի է կիրառել ԳՈՒՍ մեթոդը։ Աշակերտները աղյուսակի առաջին սյունակում կնշեն արևմտահայ այն բոլոր բանաստեղծների անունները, որոնց

ստեղծագործությունների ուսումնասիրությունը արդեն ավարտել են։ Կնշեն Պ. Դուրյանի, Սիամանթոյի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի բանաստեղծական ժողովածուների անվանումները, կանդրադառնան դրանցում զետեղված բանաստեղծությունների գաղափարական հարցադրումներին, գեղարվեստական արժեքին, յուրաքանչյուր բանաստեղծի պատկերային համակարգի առանձնահատկություններին, լեզվի և ոճի հարցերին։ Աշակերտները տարբեր բանաստեղծների՝ նույն թեման արծարծող ստեղծագործությունների զուգահեռ վերլուծությամբ կկատարեն ավելի հետաքրքիր գնահատումներ՝ շեշտադրելով յուրաքանչյուր բանաստեղծի գեղագիտական համակարգի ինքնատիպ շերտերը։ Անցած նյութի նման խորքային վերլուծությունից հետո աշակերտները ԳՈՒՍ աղյուսակի երկրորդ սյունակում կգրեն այն հարցերը, որոնք իրենց հետաքրքրում են, և դրա պատասխանները դասագրքում գուցե և չկան։ Օրինակ՝ աշակերտները կարող են հարցնել, թե ուրիշ ինչ արևմտահայ բանաստեղծներ կան, որոնց իրենք ծանոթ չեն։ Ուսուցիչը կարող է նշել Ղևոնդ Ալիշանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Վահան Թեքեյանի, Ռուբեն Սևակի անունները, ներկայացնել նրանց բանաստեղծությունների թեմատիկ տրոհումներն ու գեղարվեստական առանձնահատկությունները։

ԳՈՒՍ մեթոդի վերոնշյալ մոտեցմամբ նյութի ուսուցումը նպաստում է առավել ընդգրկուն ու տարողունակ թեմայի համակարգված ամփոփմանը, աշակերտների համեմատական-վերլուծական մտածողության զարգացմանը։

Մոտեցում 4-րդ

ԳՈՒՍ աղյուսակը կարելի է կիրառել ոչ միայն գրատախտակի վրա նշված մեկ ընդհանուր գծապատկերով, այլև առանձին թղթիկների վրա արված անհատական գծապատկերներով։ Այսինքն՝ նյութի ամփոփման փուլում ուսուցիչը կարող է աշակերտներին հանձնարարել, որ յուրաքանչյուրն իր համար առանձին թղթի վրա գծի ԳՈՒՍ աղյուսակը և անհատական լրացնի այն։ Ամփոփվող նյութի մասին իր իմացած գիտելիքները համակարգելով՝ աշակերտներից յուրաքանչյուրը կլրացնի աղյուսակի առաջին սյունակը։ Հետո երկրորդ սյունակում նրանցից յուրաքանչյուրը կգրի իրեն հետաքրքրող հարցերը։ Վերջում ուսուցիչը կհավաքի թերթիկները և կպատասխանի նրանց հարցերին։ Ուսուցիչը հարցերի պատասխանները կարող է գրել անհատական գծապատկերների վրա և անհրաժեշտության դեպքում բարձրաձայն քննարկել դասարանում։ Մեթոդի մոտեցման այս ձևը փոքր-ինչ դժվար կլինի ուսուցչի համար, սակայն այն շատ արդյունավետ է։ Եթե գրատախտակի վրա գծված ԳՈՒՍ աղյուսակը դասարանի բոլոր աշակերտների օգնությամբ լրացնելու ժամանակ գուցե որոշ աշակերտներ ակտիվ չլինեն և խուսափեն ընդհանուր քննարկումից (ուսուցիչը

պետք է հետևի, որ հնարավորինս բոլորը մասնակցեն դասընթացին), և ուսուցիչը չիմանա նրանց՝ անցած նյութի իմացության բացթողումները, ապա աղյուսակի անհատական լրացման դեպքում բոլորը ինքնաբերաբար կմասնակցեն քննարկմանը, և ուսուցիչը կիմանա յուրաքանչյուր աշակերտի իմացական մակարդակը և բացթողումների սահմանները: Այս մոտեցման առավելություններից մեկն էլ այն է, որ գուցե աշակերտներից որևէ մեկի գրած հարցադրումը այնքան հետաքրքիր լինի, որ գրավի մյուս աշակերտների ուշադրությունը՝ հարստացնելով նաև ընկերների գիտելիքները: Իսկ եթե ուսուցանվող նյութին առնչող, աշակերտների կողմից գրանցված հարցադրումները խիստ անձնական են, և աշակերտը չի ցանկանա, որ այդ մասին ընկերներն իմանան, այդ դեպքում ուսուցիչը իր գրած պատասխանը չպետք է բարձրաձայնի, անհրաժեշտության դեպքում կարող է անգամ առանձին աշակերտի հետ զրուցել:

ԳՈՒՍ մեթոդի այս մոտեցումը կարելի է կիրառել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որտեղ կան վիճահարույց հարցադրումներ կամ հերոսների կատարած գործողություններում ոչ բոլորի կողմից ընդունելի իրավիճակներ, որոնք կարող են բանավեճի պատճառ դառնալ: Այդպիսի ստեղծագործության՝ ամբողջ դասարանով քննարկման դեպքում գուցե ոմանք չցանկանան իրենց կարծիքը հայտնել կամ բարձրաձայնել իրենց հուզող հարցերը՝ անհանգստանալով ընկերների վերաբերմունքից: Կամ գուցե տվյալ աշակերտը իր տեսակով ավելի ինքնամփոփ է և խուսափում է ընկերների հետ տվյալ վիճահարույց նյութի քննարկումից: Այս դեպքում ԳՈՒՍ աղյուսակի անհատական գծապատկերների միջոցով բոլորը կկարողանան առանց մտավախության իրենց կարծիքները հայտնել և բարձրաձայնել իրենց մտահոգող կամ իրենց համար անընդունելի հարցադրումները: Ուսուցիչը պետք է շատ զգույշ լինի նրանց տրված հարցերին պատասխանելիս: Գուցե աշակերտների խոսքում լինեն նաև իր համար անընդունելի տեսակետներ: Այդ դեպքում ուսուցիչը պետք է շատ նրբանկատ դիտարկումներով պատասխանի նրանց հարցերին, որպեսզի չվիրավորի որևէ աշակերտի ինքնասիրությունը, չկոտրի աշակերտի ազատ մտածողության ձգտումը: Ուսուցիչը պետք է հարգի յուրաքանչյուրի կարծիքը, բայց շատ զգուշությամբ նրան բացատրի երևույթի առավել ընդունելի գնահատականները: Այս դեպքում աշակերտի մոտ չի կոտրվի իր տեսակետը հայտնելու ցանկությունը՝ մտավախություն ունենալով ուսուցչի անհանդուրժող վերաբերմունքից: Օրինակ՝ Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակն անցնելիս կարելի է կիրառել ԳՈՒՍ մեթոդի այս մոտեցումը: Սառայի և Թուսյանի կերպարները վերլուծելիս միանշանակ աշակերտների կողմից կլինեն տարբեր կարծիքներ, կլինեն տարբեր գնահատականներ նրանց արարքների վերաբե-

րյալ։ Ոմանք կմեղադրեն Սառային զավակի սպանության, Գարեգինի հանդեպ նման վերաբերմունքի, Թուսյանի հանդեպ կույր վրիժառության, երկրորդ զավակի ճակատագրի հանդեպ անտարբերության համար։ Ոմանք կարդարացնեն Սառային՝ պատճառաբանելով նրա վիրավորված ինքնասիրությունն ու արժանապատվությունը, շրջապատի կարծիքի վճռորոշ գործոնը, Թուսյանի սառնասիրտ ու անպարկեշտ վերաբերմունքը։ Ոմանք կմեղադրեն Թուսյանին երիտասարդ աղջկա հանդեպ նման անպատասխանատու վերաբերմունքի, նրա՝ կյանքի ու մարդկային հարաբերությունների ոչ սովորական և ընդունելի հայացքների համար [2]։ Ոմանք կարդարացնեն Թուսյանին՝ նշելով, որ նա ոչ մի կնոջ բռնությամբ չէր տիրել, անգամ դաժանորեն ծեծել էր տնօրենին աշակերտի հանդեպ ոտնձգությունների համար, ուներ իրեն մեկ անգամ տրված կյանքը վայելելու իր անհատական տեսակետի իրավունքը, որովհետև յուրաքանչյուրն ինքն է տնօրինում իր կյանքը։ Եթե ընդհանուր քննարկման ժամանակ աշակերտներից ոմանք զերծ կմնան իրենց կարծիքը բարձրաձայնելուց, ապա անհատական խոսքում ազատորեն կհնչեցնեն իրենց՝ գուցե շատերի համար անընդունելի տեսակետը։ Ուսուցիչը, յուրաքանչյուրի տեսակետը հարգելով, նրանց մեջ պետք է սերմանի մարդու և հասարակության հարաբերությունների, մարդկային նկարագրի պահպանման ճիշտ արժեքներ։

Այսպիսով՝ **ԳՈՒՍ** ուսուցման ժամանակակից մեթոդի ուսումնասիրության արդյունքում կատարեցինք հետևյալ եզրահանգումները. մեթոդի կիրառումը կնպաստի աշակերտի ազատ մտածողության և ինքնուրույն կարծիք կազմելու, սեփական դիտարկումներով երևույթը գնահատելու հմտությունների ձևավորմանը, թեմայի առավել խորքային իմացությանը, աշակերտների համեմատական-վերլուծական մտածողության զարգացմանը, աշակերտի տեսողական հիշողության միջոցով նյութի ամրապնդմանը, անցած նյութի՝ ելակետային դրույթներով ամբողջացնելու և բացթողումները լրացնելու հմտությունների ձևավորմանը [5]։

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության, ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումն ու մարդկային դրական որակների ձեռքբերումը։ Ուսուցման ժամանակակից մեթոդները, ձևերն ու տեսակները հնարավորություն են տալիս ապահովելու ուսուցչի առջև դրված այս խնդիրները։ Ուստի ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի ուսուցման ժամանակակից մեթոդներին և կարողանա դրանք ճիշտ կիրառել։

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբովյան Խ., Վերք Հայաստանի, Թիֆլիս, 1858:
2. Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան,1968:
3. Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985:
4. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008:
5. Ուսուցման արդյունավետ հնարներ, Ս. Խաչատրյան, «Է. Ֆ. Էբերտ» հիմնադրամ, Հայաստան, 2020:

ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ ГУС (ЗХУ)

Арзуманян Арменуи
ЕГУ, Армения

Аннотация

Целью статьи является определить особенности применения современных методов обучения ГУС, показать преимущества метода как интересного вида обучения, а также возможность более глубокого анализа воспроизведения знаний, выявление и закрепление пробелов в знаниях предыдущих материалов, и закрепление темы, усвоенной зрительной памятью.

Цель исследования – раскрыть сущность вышеупомянутого метода с помощью интересных наблюдений, принципы обучения материалу этим методом, а также указать и обосновать преимущества, обусловленные соответствующими особенностями этого метода обучения и показать особенности, вытекающие из цели обучения.

Новизна исследования заключается в наблюдении различных подходов к применению современного метода обучения ГУС. Различные подходы к применению метода, благодаря изучаемому материалу, были рассмотрены с интересными акцентами.

В этой статье мы постарались показать различные подходы к применению метода в зависимости от характера изучаемого материала. Мы сделали оригинальные черты метода видимыми на основе анализа литературных произведений, включенных в школьную программу по армянской литературе.

Принципы обучения материала этим методом, уникальные способы объяснения основных проблем литературного произведения, идеологические вопросы были подчеркнуты интересными наблюдениями.

В статье рассматриваются следующие подходы к использованию современного метода обучения ГУС.

Метод может быть использован на этапе представления нового материала, который находится на этапе подведения итогов изучения авторской работы, таблица GUS может использоваться не только с одной общей диаграммой на доске, но также и с отдельными диаграммами, сделанными на отдельных работах.

Представление и краткое изложение материала, преподаваемого в различных подходах к методу ГУС, способствует более глубокому пониманию темы, развитию у студентов сравнительно-аналитического мышления студентов, укреплению материала посредством зрительной памяти студента, развитию навыков заполнения пробелов переданного материала и свободного мышления у студента с помощью собственных наблюдений.

Ключевые слова и словосочетания: зрительная память, сравнительно-аналитическое мышление, идеологические проблемы, образность.

Список использованной литературы:

1. Абовян Х., Раны Армении, Тбилиси (Грузия), 1858.
2. Нар-Дос, Сборник стихов, т. 3, Ереван, 1968.

3. Налбандян М., Стихи, Ереван, 1985.
4. Современные методы обучения, приемы, упражнения, Лорийское отделение КАИ, Ванадзор, 2008
5. Эффективные педагогические навыки, С. Хачатрян, Фонд Эр-Фрберта, Армения, 2020.

FEATURES OF THE MODERN METHOD OF TEACHING GUS (KWL)

Arzumanyan Armenui
YSU, Armenia

Summary

The purpose of the article is to emphasize the features of using modern methods of teaching GUS, to show the advantages of the method as an interesting type of training , as well as the possibility of a deeper analysis of the reproduction of knowledge, identifying and fixing gaps in the knowledge of previous materials, and fixing the topic learned by visual memory.

The purpose of the study is to reveal the essence of the above-mentioned method with the help of interesting observations, the principles of teaching material by this method, and specify and substantiate the advantages of the relevant features of this learning method and to show the features derived from the training objectives.

In this article, we have tried to show different approaches to applying the method, depending on the nature of the material being studied. We made the original features of the method visible based on the analysis of literary works included in the school curriculum of Armenian literature.

The principles of teaching the material by this method, unique ways of explaining the main problems of a literary work, and ideological questions were highlighted by interesting observations.

The article considers the following approaches to using the modern method of teaching GUS.

The method can be used at the stage of presenting new material, which is at the stage of summarizing the study of the author's work. The GUS table can be used not only with one General diagram on the Board, but also with separate diagrams made on individual works.

Performance and a summary of the material taught in the different approaches to the method of GUS, promotes deeper understanding of the topic, the development of comparative and analytical thinking of students, strengthening the material through the visual memory of the student, and develop skills to fill in the gaps the transferred material and free thinking of student with his own observations.

Keywords and phrases: visual memory, comparative-analytical thinking, ideological problems, imagery.

References:

1. Abovyan Kh., "Wounds Of Armenia", Tbilisi (Georgia), 1858.
2. Nar-Dos, Collection of poems, vol. 3, Yerevan, 1968.
3. Nalbandian M., Poems, Yerevan, 1985.
4. Modern teaching methods, techniques, exercises, Lori Department of KAI, Vanadzor, 2008.
5. Effective teaching skills, S . Khachatryan, er-Frberta Foundation, Armenia, 2020.

Материал был представлен и отправлен на рецензию: 31.07.2020
Принято к публикации: 30.08.2020
Рецензент: канд. фил. наук, доцент Вагаршак Гюлбудагян

The material was submitted and sent to review: 31.07.2020
Was accepted for publication: 30.08.2020
Reviewer: Assoc. Prof., PhD Vagarshak Gyulbudaghyan